ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3086-Ա «13» օգոստոսի 2024 թ.

ԱՆԱՀԻՏ ԱԶԱՏԻ ԲԱԼԲԱԲՅԱՆԻՆ
«ԵՐԵՎԱՆԻ ՀՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ԱՆՎԱՆ Հ.74 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ
ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» ենթակետով, 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 61-րդ կետը, ինչպես նաև Անահիտ Բալբաբյանի հետ 2020 թվականի մարտի 6-ին կնքված աշխատանքային պայմանագրի 4-րդ գլխի 4.1-րդ կետի «դ» ենթակետը և 5-րդ գլխի 5.1-րդ կետը՝

1. Անահիտ Ազատի Բալբաբյանին՝ 2024 թվականի օգոստոսի 14-ից ազատել «Երևանի Հունան Ավետիսյանի անվան հ.74 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2020 թվականի մարտի 6-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «Երևանի Հունան Ավետիսյանի անվան հ.74 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը

ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրենի տեղակալ Արաքսյա Հակոբյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ, ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246